Ա.

ԺԷ դարուն կիսէն վերջ՝ Սաքս–Կոթայ դուքսն՝ իր ազգակից և կրօնակից (լութերական) եթովպագէտ Յհ. Միքայէլ Վանսլէբ (Wansleb կամ Vansleb, ծնեալ յէրֆուրդ, 1635 † 1679), երիտասարդը խաւրեց յԱփրիկէ, Ղփտեաց և Եթովպացւոց կրօնից վրայ տեղեկութիւն և արեւելեան հին ձեռագիրներ ստանալու. զոր և ըրաւ սա, բայց չկըրցաւ գոհացընել զդուքսը։ Ինքն ալ տժգոհ՝ գնաց ի Հռովմ, կաթուղիկեայ դաւանանքն ընդունեցաւ, և մտաւ ի կրօն Դոմինիկեանց. յետոյ գնաց ի Պարիս, ուր ԺԴ Լուդովիկոսի բանասէր պաշտօնեայն Քոլպերտ՝ նորէն ղրկեց զնա յԵգիպտոս, արեւելեան ձեռագիրներ ժողովելու. որ և յաջողեցաւ 330էն աւելի արաբերէն, թուրքարէն և պարսկերէն գրքեր հաւաքել և բերել։ Ասոնց թուէն էր և արաբերէն պատմութիւն մի Աբու Սալիհ Հայ անուանելոյն։ Ձեռագիրն բաւական հին է, 1338ին գրուած. հեղինակն յայտնապէս հնագոյն, ԺԳ դարուն սկիզբները վախճա-